

**ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի պրակտիկանտ-ուսանողների վերաբերյալ արտաքին
շահակիցների կարծիքի ուսումնասիրության հարցման արդյունքների /2016-17 ուստարի,
մանկավարժական պրակտիկա/**

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Կրթական համակարգը, ունենալով հարաբերական ինքնուրույնություն, միաժամանակ հանդիսանում է տվյալ երկրի, պետության սոցիալ-քաղաքական, արտադրա-տնտեսական ու մշակութային ընդհանրական համակարգի ենթահամակարգ: Ուրիշ խոսքով, այն յուրովի է կրում տնտեսակարգի, արտաքին ու ներքին քաղաքականությունների, մշակութային ավանդույթների ու իրողությունների ազդեցությունը: Բնականաբար, դրանից անմասն չէ նաև Հայաստանի կրթական համակարգը, նրա առանցքային տարրերից մեկը՝ **բուհական կրթությունը**: Մասնավորաբար, հակասականորեն ձևավորվող մրցակցային շուկայական կյանքի պայմաններում նորովի է դրվում մասնագիտական կողմնորոշման, երիտասարդ կադրերի զբաղվածության, շրջանավարտ-գործատու համակարգի արդյունավետության հիմնահարցերը:

Սույն համատեքստում արդեն ձևավորված բակալավրական կրթության կրթական ծրագրերում «նոր կարգավիճակ» են ստանում ինչպես ուսումնական, այնպես էլ արտադրական, մանկավարժական պրակտիկաները: Ընդհանրապես, սրանք անփոխարինելի հնարավորություն են ուսումնասիրության ընթացքում ձեռք բերած գիտելիքների փորձարկման, մասնագիտական հմտությունների ստուգման, դրանք կատարելագործելու տեսանկյունից: Միաժամանակ, այստեղ ճշգրտվում և պլանավորվում են ավարտական աշխատանքի ուղղվածությունն ու բովանդակությունը, նախադրյալներ են ստեղծվում ինչպես հետբուհական կրթության հնարավորությունների, այնպես էլ ապագա աշխատանքային գործունեության համար:

Պրակտիկան ուսման կազմակերպիչների, ապագա շրջանավարտների ու գործատուների շահերի խաչման յուրատեսակ կիզակետ է, սեփական գործունեության արդյունավետության գնահատման ու ինքնագնահատման լավագույն հնարավորություններից մեկը:

Մասնագիտական ամբիոնն ու սպասարկող անձնակազմը գնահատում են մատուցած կրթական ծառայությունների արդյունավետությունը, հնարավոր գործատուները՝ ապագա աշխատակիցների մոտ անհրաժեշտ որակների առկայությունը: Եթե ասվածին ավելացնենք, որ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը գտնվում է մի պետության սահմանային գոտում, որը հարևան պետության հետ «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» վիճակում է, որ ուսանողների մի սովոր հատված սահմանային բնակավայրերից են, որոնք պարբերաբար ռմբակոծվում են կամ անընդհատ այդ վտանգի տակ են, որ, չնայած պետական մարմինների գործադրած մեծ ջանքերին՝ տարածաշրջանում աշխատանք գտնելն ավելի խնդրահարույց է, թերևս ավելի ըմբռնելի ու ընդունելի կդառնա այն իրողությունը, թե ինչու է մասնաճյուղի ղեկավարությունն առանձնակի կարևորում արդյունավետ պրակտիկայի հետ կապված խնդիրները:

Այս նկատառումներից ելնելով է, որ պրակտիկանտների և արտաքին շահակիցների շրջանում մասնաճյուղի ՄԿՈՍ բաժինը 5-րդ տարին է պարբերաբար անց է կացնում հասարակական կարծիքի հարցումներ, պարզելու համար, թե ապագա մասնագետները որքանով են արդյունավետ համարում ձեռք բերած գիտելիքներն ու հմտությունները, իսկ ապագա գործատուները՝ իրենց հնարավոր «գործընկերների» մասնագիտական ու անձնային որակները:

Հայտնի է, որ ժամանակակից գործատուների պահանջներն ապագա աշխատակիցների հատկանիշների վերաբերյալ, շատ հարցերում էապես տարբերվում է նախկին պահանջներից: Նախ, խորհրդային համակարգում մասնագետների աշխատանքի տեղավորման խնդիր, նրա ժամանակակից ըմբռնումով, գործնականում գոյություն չուներ: Գրեթե բոլոր շրջանավարտների համար նախատեսված էին համապատասխան աշխատատեղեր:

Պետական մարմիններին, մասնավորաբար կրթօջախի համապատասխան ստորաբաժանմանը, հարկ էր, ընդամենը, ելնելով շրջանավարտների ուսման առաջադիմությունից, տեսա-գործնական գիտելիքներից, սովորելու ընթացքում դրսևորած սոցիալական որակներից նրանց առաջարկել /յուրովի նաև ստիպել/ որոշակի ժամանակահատված աշխատել տվյալ հիմնարկությունում՝ որպես պայմանագրային պահանջ: Տվյալ ժամանակահատվածից հետո մասնագետը կարող էր ազատորեն տնօրինել իր աշխատանքային ճակատագիրը: Ներկայումս այդ ամենը գոյություն չունի:

Հարաբերական իմաստով ապագա մասնագետները թողնված են «բախտի քմահաճույքին», կամ ապավինում են աշխատանքի տեղավորվելու սեփական հնարավորություններին: Բազմաթիվ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով, որոնցում էական է նաև Հայաստանի ու տարածաշրջանի յուրահատկությունների ազդեցությունը, մասնագետ-գործատու համակարգը լիարժեքորեն ձևավորվելու ու կատարելագործվելու համար դեռևս «երկար ճանապարհ» ունի անցնելու:

Այս բացը լրացնելուն է ուղղված կրթօջախներում, այդ թվում մասնաճյուղում ստեղծված «Շրջանավարտների և կարիերայի կենտրոն»-ի գործունեությունը, ինչը սակայն նույնպես բազմաթիվ, այդ թվում դժվարագույն խնդիրների առջև է կանգնած: Մասնավոր սեփականությունը, ազատ մրցակցային շուկայական կյանքը սույն հարցում դեռևս թույլ է տալիս բազմաթիվ «կամայականություններ» գործատուների կողմից, ինչի կառավարելիությունն ու կարգավորվածությունը դեռևս խնդրահարույց է: Մի իրողություն, որը, թեկուզև անուղղակիորեն, սակայն որոշակի ազդեցություն ունի նաև կրթամասնագիտական աշխատաշուկայի վրա:

Նման պայմաններում ՄԿՈԱ բաժնի կողմից արտաքին շահակիցների շրջանում վերջին հարցումն անց է կացվել 2017թ. փետրվար-մարտ ամիսներին:

Հարցաշարում արտաքին շահակից-մանկավարժները 5 բալանի սանդղակով /5-ը ամենաբարձր, իսկ 1-ը՝ ամենացածր գնահատականն է/ գնահատել են պրակտիկանտ-ուսանողների տեսա-գործնական գիտելիքներն ու հմտությունները, ստեղծագործական ներուժը, ժամանակակից մեթոդներ ու տեղեկատվական տեխնոլոգիաներ կիրառելու կարողությունները, նաև ուսանողների մասնագիտական խոսքի մակարդակը, թիմում աշխատելու հնարավորությունները, գործնական բարոյականությունը:

Ներկայացնենք վերջին հարցման տվյալները, նաև նախորդ հարցումների արդյունքների հետ դրանց համեմատական վերլուծությունը:

Աղյուսակում բերված են արտաքին շահակիցների կողմից պրակտիկանտ-ուսանողների վերոնշյալ որակներին տրված գնահատականները՝ բացարձակ թվերով, տոկոսներով և միջին բալերով:

Հարցմանը մասնակցած արտաքին շահակիցների թիվը								54
Թիվ	Մեր պրակտիկանտ-ուսանողների.	Գնահատական / %						
		5		4		3		Միջ.գն.
1	տեսական գիտելիքների իմացությունը	44	81,5%	10	18,5%	0	0,0%	4,81
2	գործնական հմտությունները	33	61,1%	21	38,9%	0	0,0%	4,61
3	ստեղծագործական մոտեցումները մասնագիտական գործընթացում	38	70,4%	14	25,9%	1	1,9%	4,70
4	դասավանդման ժամանակակից մեթոդներ կիրառելու կարողությունը	36	66,7%	14	25,9%	3	5,6%	4,62
5	տեղեկատվական տեխնոլոգիաներ կիրառելու կարողությունը	39	72,2%	14	25,9%	1	1,9%	4,70
6	մասնագիտական խոսքը	36	66,7%	17	31,5%	0	0,0%	4,63
7	թիմում աշխատելու հմտությունները	41	75,9%	12	22,2%	1	1,9%	4,74
8	վարվեցողության կանոններին և էթիկայի նորմերին հետևելը	51	94,4%	3	5,6%	0	0,0%	4,94
9	մանկավարժական /մասնագիտական/ պրակտիկայի կազմակերպման գործընթացը	39	72,2%	13	24,1%	1	1,9%	4,72

Ինչ ընդհանրական դատողությունների են «մղում» տվյալ գնահատականները 0,2 բալ և 5,0 տոկոս ընդունված սխալանքի շրջանակներում:

Նախ այն, որ 5 բալանի սանդղակքով արտաքին շահակիցները մասնաճյուղի պրակտիկանտ-ուսանողներին արժանացրել են «շատ բարձր» գնահատականին (4,5-ից բարձր գնահատականներ): Ինչպես տեսնում ենք բոլոր հատկանիշների գնահատականների միջինը 4,5-ից բարձր է: Մյուս կողմից՝ չկա որևէ «ցածր» կամ «շատ ցածր» գնահատական: Միայն «Դասավանդման ժամանակակից մեթոդներ կիրառելու կարողությունները» հատկանիշի մասով կա սխալանքից փոքր-ինչ ավել՝ 5,6% «միջին» գնահատական (այդպես են գնահատել 54 արտաքին շահակիցից՝ 3-ը): Մյուսները սխալանքի շրջանակներում են, այսինքն վիճակագրական արժեք չեն ներկայացնում և կարող են քննարկվել միայն որակական «հարթությունում»: Աչքի է զարնում այն փաստը, որ «անսովոր» շատ են ամենաբարձր (գործնականում՝ իդեալականացնող) գնահատականները: Այսպես, ուսանողների «վարվեցողության կանոններին և էթիկայի նորմերին հետևելու» հատկանիշին ամենաբարձր՝ 5 բալ են նշանակել հարցման 54 մասնակիցներից 51-ը (միջին գնահատականը՝ 4,94), «Տեսական գիտելիքներին»՝ 44-ը (միջին գնահատականը՝ 4,81), «Թիմում աշխատելու ունակությանը»՝ 41-ը (միջին գնահատականը՝ 4,74):

Հարաբերական իմաստով ամենացածրը «Գործնական հմտությունների» (4,61 բալ), «Դասավանդման ժամանակակից մեթոդներ կիրառելու կարողության» (4,62 բալ) և «Մասնագիտական խոսքի» (4,63 բալ) գնահատականներն են:

Ստացված տվյալներից որոշակի անաչառ ու ընդհանրական հետևությունների համար թերևս կարևոր է նշել նաև հետևյալ ակնհայտ հանգամանքները.

ա/ ոչ բոլոր ուսանողներն են սովորում գերազանց առաջադիմությամբ, հետևաբար՝ իդեալականորեն տիրապետում ներկայացվող որակներին;

բ/ հարցման մասնակիցներից ոչ բոլորն են իրապես ընդունակ մասնաճյուղի ուսանողների ներկայացված հատկանիշները գնահատել համարժեքորեն:

Այսինքն հետևությունները պետք է ընկալել համեմատական իմաստով և որոշակի վերապահությամբ:

Վերոնշյալ համատեքստում, ելնելով հարցման արդյունքներից կարող ենք ասել, որ **Տավուշի մարզի մանկավարժների ու կրթօջախների ղեկավարության կարծիքով մասնաճյուղի այն ուսանողները, որոնք 2017 թվականին դպրոցներում անց են կացրել մանկավարժական պրակտիկա, հիմնականում դրսևորել են ապագա մանկավարժին բնորոշ բարձրագույն որակներ:** Ամենաբարձր մակարդակի վրա են եղել էթիկայի նորմերին նրանց հետևելը, դասավանդվող առարկաների վերաբերյալ տեսական գիտելիքները, համատեղ աշխատանքի նրբություններին տիրապետելը, դասապրոցեսին ստեղծագործաբար վերաբերվելը, «քոմփյութերային» մշակույթը: Փոքր-ինչ պակաս, բայց պատշաճ աստիճանի է եղել նաև մասնագիտական խոսքը, դասավանդման ժամանակակից մեթոդների իմացությունը, գործնական հմտությունները:

Այդ նույն տվյալները միաժամանակ թույլ են տալիս կատարել որոշակի գործնական հետևություններ: Մասնավորաբար, այն, որ մարզի կրթական ոլորտի ներկայացուցիչների կարծիքով մասնաճյուղի մանկավարժական մասնագիտությունների ուսումնական պլանների, կրթական ծրագրերի կատարելագործման գործընթացներում առաջին հերթին պետք է ավելի մեծ ուշադրություն դարձնել տեխնիկական միջոցներով դասը վարելու ժամանակակից մեթոդներին, մանկավարժ-սովորող հարաբերություններում սոցիալ-հոգեբանական և հոգեբանական օրինաչափություններին, գործնական հմտությունների արդյունավետ փոխանցման մեթոդներին, դասը ավելի անկաշկանդ, ստեղծագործաբար ու մատչելի խոսքով վարելու եղանակներին և այլն:



Մասնագիտական և բարոյա-սոցիալական մտորումների տեղիք են տալիս նախորդ հարցումների արդյունքների հետ վերջին հարցման տվյալների համեմատությունը՝ պրակտիկանտ-ուսանողների մի շարք առանցքային հատկանիշների մասով:

Ներքևի բերված աղյուսակներում և դիագրամներում ներկայացված են 2012-2017թթ. անցկացրած հինգ հարցումների տվյալները ուսանողների.


ա) տեսա-գործնական գիտելիքների ու մասնագիտական խոսքի վերաբերյալ,

N	Մեր պրակտիկանտ-ուսանողների.	2012-13	2013-14	2014-15	2015-16	2016-17
1	տեսական գիտելիքների իմացությունը	3,87	4,00	4,52	4,81	4,81
2	գործնական հմտությունները	3,52	3,96	4,45	4,55	4,61
3	մասնագիտական խոսքը	3,57	3,94	4,55	4,64	4,63



բ) դասավանդման ժամանակակից մեթոդներ և տեղեկատվական տեխնոլոգիաներ կիրառելու կարողությունների վերաբերյալ,




զ) մասնագիտական գործընթացում ստեղծագործական մոտեցումների վերաբերյալ,



դ) բարոյական վարքի և թիմային աշխատանքում հմտությունների վերաբերյալ,



ե) պրակտիկայի կազմակերպման գործընթացի վերաբերյալ:



Մինչ դրանց վերլուծությունն ու մեկնաբանումը համառոտակի անդրադառնանք նման հարցումների հանդեպ շահախնդիր կողմերի վերաբերմունքին:

Թերևս պատմական ճշմարտություն է այն փաստը, թե հանրային կյանքում յուրաքանչյուր նորը, ճշմարիտն ու օգտակարն ուղի են հարթում մեծ դժվարություններով, իրենց ճանապարհին հանդիպող բազմաթիվ օբյեկտիվ ու սուբյեկտիվ, բնական ու արհեստական բնույթի խոչընդոտները հաղթահարելով: Քիչ չեն դեպքերը, երբ առաջընթացի հակառակորդներին, «ավելորդ ու անհարկի» պահպանողականներին ժամանակավորապես հաջողվում է դանդաղեցնել գործընթացները, երբեմն նույնիսկ՝ կասեցնել դրանց: Դա արվում է ամենատարբեր միջոցներով, հաճախ նաև՝ «գոտկատեղից ներքև» հարվածներով: Մակայն ժամանակն ու կյանքը համոզում են, որ իրոք **ճշմարիտն ու օգտակարն** ի վերջո «ինքնահաստատման» ուղին հարթում են: **Մի դեպքում** այն արդյունք է կառավարչական ու կազմակերպչական կամքի դրսևորման, **մեկ ուրիշում**՝ ճշմարտությանը կատարողների նվիրվածության ու համառ ջանքերի, **երրորդում**՝ դեկավար-ենթակա համակարգի ներդաշնակ գործառնման: Ասվածը մեծապես ու յուրովի

վերաբերում է նաև մասնաճյուղում հասարակական կարծիքի, որպես կոլեգիալ կառավարման կարևորագույն մեխանիզմի ներդրմանը:

Նախկինում ավելի շատ, քան այժմ, բայց այսօր էլ կարող էք հանդիպել աշխատակիցների, սովորողների, որոնք թերահավատորեն են վերաբերվում «աներևույթ, վերացական» այնպիսի մի ուժի ուսումնասիրման, կյանքում ներդրման կարևորությանը, ինչպիսին համատեղ աշխատանքի խնդիրների վերաբերյալ ընդհանրական կարծիք-գնահատականի իմացությունն է: Որքան էլ անցանկալի է ու համատեղ աշխատանքային կյանքի համար վնասակար, այսօր էլ գտնվում են անձիք, որոնք սեփական կարծիքն ու տեսակետը հիմնավորելու, հրապարակավ արտահայտելու ու այն պաշտպանելու փոխարեն, գերադասում են սուբյեկտիվ վատատեսությունն ու անբարյացակամությունը փոխանցել «գաղտագողի ու ծածուկ» կերպով: Նման դիրքորոշման հիմնական նպատակը «չվնասվելով վնասելն է», ինչը չի կարող ունենալ որևէ բարոյական հիմնավորում ու արդարացում: Սակայն, բարեբախտաբար, մասնաճյուղի տնօրինության դրական վերաբերմունքը նաև դրա ազդեցության տակ մասնագիտական պատրաստության և ուսման կազմակերպման համար պատասխանատու ստորաբաժանումների անձնակազմերի գործուն մասնակցությունը նման հարցումների արդյունքների ներդրման, սեփական գործունեության մեջ հաշվառման հարցերում, ժամանակի ընթացքում տալիս են իրենց դրական «պտուղները»:

Այսօր ՄԿՈԱ բաժնի շնորհիվ ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող բոլոր հիմնախնդիրների վերաբերյալ մասնաճյուղի ներքին ու արտաքին շահակիցների շրջանում հարցումներն ընկալվում են որպես սովորական, առօրյա երևույթ: Այն, ինչը չէր կարող լինել, եթե ժամանակի ընթացքում չապացուցեր իր պահանջվածությունը: Դրա ապացույցներից է նաև տարբեր տարիներին արտաքին շահակիցների հարցումների արդյունքների համեմատությունը:

Ինչպես տեսնում ենք վերևում բերված տվյալներում, ընդգծված օրինաչափությամբ, 2012-2013 ուստարվանից սկսած, պրակտիկանտների տեսական գիտելիքների իմացության, գործնական հմտությունների ու մասնագիտական խոսքի գնահատումներում նկատվում է վիճակագրական որակա-քանակական աճ: Այն նկատվում է նաև մասնագիտական գործընթացում ստեղծագործական մոտեցումների, դասավանդման ժամանակակից մեթոդներ կիրառելու կարողության, վարվեցողության կանոններին ու էթիկայի նորմերին հետևելու գնահատումներում: Նկատելի աճ չի արձանագրվել տեղեկատվական տեխնոլոգիաներ կիրառելու կարողության, թիմում աշխատելու հմտությունների ու պրակտիկայի կազմակերպման գործընթացի գնահատումներում: Հանուն արդարության նշենք, որ վերջին երեք որակներն ամրագրվել են միայն 2015-17թթ.-ին անցկացված երեք հացումներում:

Մեջբերված բոլոր այս փաստերը մասնագիտորեն, վերոնշյալ նկատառումների համատեքստում, ընկալվում են որպես վիճակագրական օրինաչափություններ, այսինքն՝ «պատահական անհրաժեշտություններ», որպես կազմակերպության գործունեության մեջ «Մեծ թվերի օրենքի դրսևորումներ»:

Ի՞նչն ի նկատի ունենք: Ուսումնասիրության կազմակերպիչները չեն առարկում, որ հաշվետու տարիների ընթացքում եղել են բազմաթիվ մեծ ու փոքր թերություններ, սովյալների հուսալիության ու հավաստիության վերաբերյալ ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ բնույթի կասկածներ, երբեմնի անվստահություն: Այն արտահայտվել է ինչպես պաշտոնական, այնպես էլ ոչ պաշտոնական հաղորդակցությունների ժամանակ: Միաժամանակ իրողություն է

այն, որ մասնաճյուղի ղեկավարությունը, ներքուստ համոզված լինելով նման գործունեության արդիականության ու կրթական համակարգի համար օգտակարության մեջ, ներողամտորեն շրջանցել է առկա թերությունները: Առաջին իսկ հարցումներից հետո ավելի շատ ուշադրություն է դարձրել ստացված տվյալների վրա, այն համեմատել տասնամյակների փորձառության ընթացքում ձևավորված սեփական պատկերացումների, սուբյեկտիվ գնահատականների հետ, համոզվել դրանց միջև որոշակի առնչության առկայության մեջ: Կարողացել է արդյունքների մեջ նկատել նաև այնպիսի փաստեր, որոնք գործնականում անհնար էր ստանալ առանց գիտակա- նորեն հիմնավորված հետազոտության: Զուգահեռաբար, յուրաքանչյուր հաջորդ անգամ ավելի ուշադիր է եղել հարցումների հեղինակների բացթողումների, հետազոտական անկատարությունների հանդեպ, պարտադրելով աստիճանաբար կատարելագործել հետազոտությունների գործիքակազմը, մեծացնել արդյունքների հավաստիության աստիճանը, այն ամենը, ինչը կարող է մեծացնել մասնաճյուղի հանրության վստահությունը այդպիսի հարցումների կարևորության հանդեպ: Դա թե վարչական, և թե բարոյական հիմք է հանդիսացել, որպեսզի համապատասխան ստորաբաժանումներին կառավարչորեն պարտադրվի պարբերաբար քննարկման նյութ դարձնել ստացված արդյունքներն ու կարելիվոյն քայլեր ձեռնարկել նկատված թերությունները վերացնելու ուղղությամբ:

Արդյունքում ստացվել է այն, ինչ ունենք: Այսինքն, որակական առաջընթաց ունենք ուսանողների այն հատկանիշների գնահատականներում, որոնք շատ ավելի են անմիջականորեն առնչվում մասնագիտական ամբիոնի գործունեության, դասավանդող դասախոսների մանկավարժական մոտեցումների հետ: Հետևաբար, մասնաճյուղի մակարդակով ավելի մատչելի են, քան այն հատկանիշները, որոնց կատարելագործումը միայն կրթօջախի աշխատանքով չի պայմանավորված: Դա վերաբերվում է ինչպես ուսանողների տեսական գիտելիքներին ու գործնական հմտություններին, այնպես էլ մասնագիտական խոսքին, մասնագիտական գործընթացում ստեղծագործական մոտեցումներին ու դասավանդման ժամանակակից մեթոդների կիրառմանը:

Թիվ	Մեր պրակտիկանտ-ուսանողների.	2012-13	2013-14	2014-15	2015-16	2016-17
1	տեսական գիտելիքների իմացությունը	3,87	4,00	4,52	4,81	4,81
2	գործնական հմտությունները	3,52	3,96	4,45	4,55	4,61
3	մասնագիտական խոսքը	3,57	3,94	4,55	4,64	4,63
4	դասավանդման ժամանակակից մեթոդներ կիրառելու կարողությունը	3,22	3,64	4,39	4,51	4,62
5	տեղեկատվական տեխնոլոգիաներ կիրառելու կարողությունը			4,61	4,85	4,70
6	ստեղծագործական մոտեցումները մասնագիտական գործընթացում	3,70	3,77	4,45	4,66	4,70
7	վարվեցողության կանոններին և էթիկայի նորմերին հետևելը	4,13	4,49	4,76	4,85	4,94
8	թիմում աշխատելու հմտությունները			4,73	4,81	4,74

Մասնավորաբար, եթե 2012-13 ուստարում գործնական հմտությունների գնահատականը եղել է «միջակի» սահմաններում՝ 3,52 բալ, ապա անշեղորեն աճելով 2017 թվականին դարձել է 4,61 բալ: Դասավանդման ժամանակակից մեթոդների կիրառման մեջ ամրագրվել է

համեմատաբար ամենամեծ առաջընթացը՝ 1,40 բալ (3,22-ից դարձել է 4,60 բալ): Մասնագիտական խոսքը 2012-ին եղել է 3,57, իսկ 2017-ին դարձել է 4,63 բալ, ստեղծագործական մոտեցումները մասնագիտական գործընթացում 2012-ին՝ 3,70-ից 2017-ին՝ 4,70, բարոյական վարքը 2012-ին՝ 4,13-ից 4,94՝ 2017-ին:

Կարծում ենք ավելի արդարացի կլինենք, եթե վերապահումով մոտենանք այն հատկանիշներին, որոնց գնահատումներում որակական առաջընթացը բացակայում է: Նախ այն պատճառով, որ, ինչպես նշեցինք, այստեղ ամրագրվել են ընդհամենը երեք տարիների հարցումները, ինչը համեմատելու ավելի քիչ հնարավորություն է ընձեռում: Այնուհետև, բոլոր երեք հատկանիշներում ամրագրված են «Շատ բարձր» գնահատականներ 2015-17թթ. երեք հարցումների ընթացքում.

ա/ տեղեկատվական տեխնոլոգիաներ կիրառելու կարողությունը՝ 4,61; 4,85; 4,70;

բ/ թիմում աշխատելու հմտություններ՝ 4,73; 4,81; 4,74;

գ/ պրակտիկայի կազմակերպման գործընթաց՝ 4,7; 4,68; 4,72:

Եվ վերջապես, թեկուզև տարբեր չափով, այս որակների կատարելագործումը միայն մասնաճյուղի ուժերով իրագործելը եթե ոչ անհնար, այդուհանդերձ, շատ ավելի դժվար է, քան, ասենք, տեսական գիտելիքների բարելավումը կամ մասնագիտական խոսքի կատարելագործումը:

Այնպես որ հիմնավորված է այն միտքը, թե ***մասնաճյուղը ուսանողությանը պատշաճորեն է նախապատրաստում մասնագիտական փորձառություններին, առաջիկա պրակտիկաների արդյունավետ անցկացմանը և այդ գործում ականջալուր է արտաքին շահակիցների դիտողություններին ու առաջարկներին:***

Այս առումով, հարցումից տպավորությունը ամբողջացնելու նպատակով անդրադառնանք նաև հարցման մասնակիցների հնչեցրած **առաջարկներին:**

Հարցման մասնակիցներին **խնդրել ենք նշել**, թե մասնաճյուղի **պրակտիկանտ-ուսանողների** մասնագիտական ու մանկավարժական ո՞ր որակները կցանկանային փոխել, այնուհետև ի՞նչ **առաջարկներ** ունեն պրակտիկայի կազմակերպման գործընթացը բարելավելու ուղղությամբ:

Առաջին հարցի առնչությամբ հարցման **54** մասնակիցներից կարծիք են հայտնել **21**-ը: Թերևս բնական է, որ մասնագիտական նկարագրի ու որակների փոփոխման հետ կապված առաջարկներն աննշան են, քանզի մեջբերված տվյալներից տեսանք, թե այդ հատկանիշները որքան բարձր են գնահատում մեր հարցման մասնակիցները:

Այստեղ ընդամենը երկու ցանկություն է արտահայտվել. ***ավելի խորը տիրապետեն առարկային, նաև ինքնակրթությամբ ձեռք բերեն համապատասխան գիտելիքներ:***

Ավելի շատ են մանկավարժական բնույթի նկատառումները:

1. Թեկուզ տարբեր տերմիններով ու ձևակերպումներով, տվյալ համատեքստում հոմանիշներ են ընկալվում **9**-ը մասնակիցների ցանկությունները, որոնք կուզենային ***դասավանդման ընթացքում մեր պրակտիկանտների մոտ ամրագրել ավելի մեծ ինքնավստահություն, անկաշկանդություն, համարձակություն, նախաձեռնողականություն:***
2. **հարցման 7** մասնակիցներ ցանկանում են, որ ***ապագա մանկավարժներն ուսման ընթացքում ավելի խորը տիրապետեն դասավանդման ժամանակակից մեթոդներին,***

դրսևորեն գործնական հմտություններ՝ ավելի գրագետ խոսքի ու պատկերավոր մատուցման միջոցով, դասը ավելի շատ «համեմեն» լրացուցիչ պատմություններով:

3. Ուշադրության են արժանի նաև եզակի առաջարկությունները: Օրինակ, ցանկությունը, որ **պրակտիկանտն ունենա ավելի համարժեք ժամանակի զգացողություն** (արդյունավետ տնօրինի դասաժամը), ունակ լինի անցկացնելու **ինտերակտիվ դաս**, այն դարձնելով աշակերտակենտրոն:
4. Բնական ու վեհ է հնչում **մեկ** մասնակցի «պատվիրանը», կարողանալ հասկացնել ապագա ուսուցչին, որ **մանկավարժությունը կոչում է, այլ ոչ թե գուտ աշխատանք**, մի բան, որը կստիպի ավելի պատասխանատու վերաբերվել դրա հետ կապված յուրաքանչյուր «մանրուքի»:

Պրակտիկայի կազմակերպման գործընթացի բարելավմանն ուղղված արտաքին շահակիցների ցանկությունները (**թվով 30**) կենտրոնացած են հետևյալ առաջարկների շուրջ:

Նախ դա վերաբերում է **պրակտիկայի տևողությանը (7 առաջարկ)**: Մի դեպքում համարվում է, որ ուսման կազմակերպիչները պետք է ռեսուրսներ գտնեն ավելի երկարացնել պրակտիկայի տևողությունը, ինչն էապես կբարելավի նրա որակը: **Մեկ ուրիշում** կարծիք է հայտնվում, որ կարելի է ավարտական կուրսում անցկացնել նաև 2-3 կարճատև պրակտիկաներ: Ի դեպ, ժամանակի ու տևողության հարցը պարբերաբար արծարծվել է նաև ուսանողների հարցումներում, վերջինը՝ բարձր կուրսեցիներից կազմված ֆոկուս-խմբերի հետ քննարկումներում (տես հաշվետվությունը մասնաճյուղի կայքում):

Մյուս ցանկությունը վերաբերում է **պրակտիկայի գործընթացին ղեկավարի մասնակցությանը (6 առաջարկ)**: Հարցման մասնակիցները, մի շարք հանգամանքներով պայմանավորված կարևորում և լուրջ գործոն են համարում պրակտիկայի ղեկավարի անմիջական մասնակցությունը (հնարավորինս շատ) անցկացվող դասերին: Համարվում է, որ այն էապես կբարձրացնի թե ուսանողների, և թե պրակտիկայի վայրի ներկայացուցիչների պատասխանատվությունը: Մի շարք մասնակիցներ այս կամ այն կերպ ձևակերպում են պրակտիկայի գործընթացում ուսուցչի մասնակցելու համար առաջարկը:

Մյուս առաջարկությունները, որոնք արտահայտել են մեկ-երկու մասնակից, ընդամենը թվարկենք.

- պրակտիկայի հետ առնչվող բոլոր անձանց ավելի սերտ համագործակցություն;
- պարապող ուսուցչի պասիվ մասնակցություն դասապրոցեսին, որպեսզի պրակտիկանտը կարողանա ավելի շատ ինքնադրսևորվել;
- ավելի մենձ ուշադրություն պրակտիկանտի խոսքի մշակույթին;
- շերտավորված ուսուցում:

Տպավորությունը ամբողջացնելու նպատակով մեջբերենք նաև 2017 թվականի պրակտիկային մասնակցած ուսանողների հետ ՄԿՈԱ բաժնի մասնագետների անմիջական հանդիպման արդյունքում հավաքագրված որոշ դատողություններ, կապված պրակտիկայի անցկացման վայրում վերաբերմունքի ու իրենց սպասելիքների հետ: Պրակտիկայի անցկացման գործընթացից ուսանողների գերակշիռ մասի արտահայտած գոհունակության կողքին հնչեցվել են նաև վերոնշյալ առաջարկներին համահունչ գնահատականներ, այն է.

- «մեզ լիարժեք չեն բացատրել, թե ինչ է պրակտիկան, չկա միասնական ըմբռնում»,
- «վերահսկողությունը, հատկապես դպրոցների կողմից թույլ էր»,

- «դպրոցում կային ուսուցիչներ, որոնք մեզ ապակողմնորոշում էին, չէին հասկանում մեր յուրահատկությունները»,
- «ցանկանում ենք դաս վարել (պարապել), չեն թողնում՝ հավանաբար խանդի, նախանձի զգացողությունից ելնելով»;
- «ուսուցիչներն ու դպրոցի ղեկավարությունը լուրջ չէին վերաբերվում»:

Ընդհանրացնելով արտաքին շահակիցների կարծիքը մանկավարժական պրակտիկա անցած ուսանողների վերաբերյալ կարող ենք ասել, որ.

- մասնաճյուղի այն ուսանողները, որոնք 2017 թվականին դպրոցներում անց են կացրել մանկավարժական պրակտիկա, գնահատման 5 բալանի սանդղակի շրջանակներում **հիմնականում դրսևորել են ապագա մանկավարժին բնորոշ բարձրագույն որակներ**: Դրանցում առաջնակարգ տեղեր զբաղեցրել են նրանց. 1. էթիկայի նորմերին հետևելը (4,94 բալ), 2. տեսական գիտելիքները (4,81 բալ);

- նախորդ հարցումների արդյունքների հետ վերջին հարցման գնահատականների համեմատությունը վկայում է, որ, «Դասավանդման ժամանակակից մեթոդների կիրառում», «Գործնական հմտություններ», «Ստեղծագործական մոտեցումներ մասնագիտական գործընթացում», «Մասնագիտական խոսք» և «Էթիկայի նորմերին հետևելը» հատկանիշների մասով **սամրագրվել է որակական առաջընթաց**: Այն հասարակական կարծիքի հարցումների օգնությամբ բուհ-գործատու համագործակցության արդյունավետության մեծացման գիտականորեն հիմնավորված ապացույց է;

- պրակտիկայի վերաբերյալ պրակտիկանտ-ուսանողների և արտաքին շահակիցների գնահատականների համեմատությունը վկայում է, որ, կրթական զարգացումների ներկա համատեքստում **օրախնդիր է մնում ապագա մասնագետների գործնական հմտությունների, թիմային աշխատանքի մշակույթի կատարելագործումը**:

- օրախնդիր է նաև ըստ մասնագիտությունների յուրահատկության **պրակտիկաների տևողության, ժամանակահատվածի և հաճախության** արդյունավետության հիմնահարցը;

Ելնելով վերոնշյալից առաջարկվում է.

- հարցման արդյունքները տեղադրել մասնաճյուղի էլեկտրոնային կայքում;
- մասնագիտական ամբիոնների պրակտիկաների ղեկավարների և համապատասխան արտաքին շահակիցների հետ կազմակերպել համատեղ քննարկումներ, մշակել մեթոդներ և միջոցառումներ ուսումնառության տարիներին ապագա մասնագետներին ժամանակակից գործնական հմտություններով ու կարողություններով օժտելու համար: Դա հատկապես վերաբերում է դասավանդման գործընթացում ստեղծագործական մոտեցմանը, թիմում աշխատելու ունակությանը, դասավարման ժամանակակից մեթոդներին;
- մասնագիտական ամբիոնների պատասխանատուների և ուսումնա-մեթոդական վարչության հետ քննարկել պրակտիկաների տեղի, տևողության, ժամանակահատվածի և հաճախությունների խնդիրներին տարբերակված մոտեցման արդյունավետության հարցը և, հնարավորության դեպքում, առաջարկ ներկայացնել տնօրինությանը:

*Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժին
2017թ., մարտ*